ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201**

**հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com**

*22 ՄԱՐՏԻ 2016թ.*

*ԹԻՎ 398*

<ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ> ՊՈԱԿ-Ի ՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Մ. Ա Ն Ա Ն Յ Ա Ն Ի Ն

*Հարգելի պարոն Անանյան*

Ի պատասխան Ձեր 10.03.2016թ. հմ. 01/0431/858-16 (մուտք 18.03.2016թ.) գրության տեղեկացնում եմ, որ Աշտարակի քաղաքապետարանի <<ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1> շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով, քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2016թ.-ի նիստում կայացվել էր որոշում՝ <Մեծ հիմք> ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնելու մասին:

Թեժ գծից 12.03.2016թ.-ի էլեկտրոնային փոստով ուղարկված նամակով ստացված արձանագրության մասով 14.03.2016թ.-ին գնահատող հանձնաժողովը գումարել է արտահերթ նիստ, որով հիմք ընդունելով բողոքի բովանդակությունը և աշխատանքները կատարելու սեղմ ժամկետները, որոշում է կայացրել բավարարել <ԷԴԼԱԺ> ՍՊԸ-ի բողոքը, մերժելով <Մեծ հիմք> ՍՊԸ-ի և <Վահագն> ԱԿ-ի հայտերը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <ԷԴԼԱԺ> ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող:

Կից ներկայացվում է գնահատող հանձնաժողովի 11.03.2016թ., 14.03.2016թ. արձանագրությունները և <ԷԴԼԱԺ> ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումը:

X

Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

***Կատարող՝***
*Հ. Հակոբյան*